



**YEREVAN STATE UNIVERSITY  
ENGLISH PHILOLOGY CHAIR**

**ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH**

**LANGUAGE AND LITERATURE IN  
THE CONTEMPORARY PARADIGM  
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

*SCIENTIFIC JOURNAL*

**9**

Yerevan  
“Lusakn”  
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

*ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

9

Երևան  
«Լուսակն»  
2018

**Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**The Journal is published by the decision of YSU Scientific Council**

**Գլխավոր խմբագիր՝** Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,  
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

**Խմբագրական խորհուրդ՝**

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

**Editor-in –chief:** S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding  
Member of RA NAS, Honoured Scientist of RA

**Editorial Board:**

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:  
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.  
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ .....	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ .....	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
<b>ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ</b> ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	54
<i>Հասմիկ Ղաթոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ .....	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍՏԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ .....	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

<b>ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ</b> <b>ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ</b> .....	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

<b>THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE</b> .....	111
<i>Nare Hakobyan</i>	

<b>ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО</b> .....	123
<i>Марика Тонян</i>	

## **ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

<b>ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ</b> .....	132
<i>Մարիանա Մարգարյան</i>	

<b>ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ</b> .....	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

<b>COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN</b> .....	153
<i>Jemma Militonyan</i>	

## **ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ</b> <b>ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ</b> .....	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

## **ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ</b> <b>ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ</b> .....	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

<b>НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА</b> .....	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

<b>ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО</b> .....	188
<i>Наре Мкртчян</i>	

## **ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

<b>ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ</b> <b>ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ</b> .....	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասմիկ Ղազոյան

*Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան*

Սույն հոդվածի ուսումնասիրության նյութը անդրադարձ է «եզրույթի» և «բառի» գիտական սահմանմանն ու դրանց առանձնահատկություններին: Եզրույթները սահմանում են գիտության, տեխնիկայի, մշակույթի և առհասարակ կյանքի որևէ բնագավառի մասնագիտական հասկացություններ: Եզրույթը (եզր, եզրաբառ, տերմին, գիտաբառ) բառապաշարի բաղադրիչ է, սակայն լեզվի ոչ բոլոր բառերն են եզրույթներ: Եզրույթները ճշգրտորեն անվանում են մասնագիտական իրողություններ: Բառը և եզրույթը անմիջականորեն կապված են հասկացության հետ, սակայն եզրույթի բովանդակությունը հավասարաթեք է հասկացությանը և սահմանված է հատուկ գործածության համար, իսկ բառի անվանողական գործածության ծավալն ավելի լայն է: Բառի և եզրույթի արտահայտած իմաստները կարող են նույնը չլինել: Անճշտություններից խուսափելու համար եզրույթաբանությունը հաճախ սահմանազատում է եզրույթները սովորական բառերից:

**Բանալի բառեր.** *եզրույթ, եզրույթաբանություն, բառակապակցություն, բառ, հասկացություն, ենթատեքստ:*

## Ներածություն

Գիտության և հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները արտացոլվում են լեզվում: Լինելով գործիք, որով ձևակերպվում են գիտական տեսությունները, օրենքներն ու դրույթները, գիտական հասկացություններն ու դրանց համակարգերը՝ լեզուն հանդես է գալիս և՛ որպես գիտելիքների արտահայտման միջոց, և՛ որպես գիտության կառուցվածքային տարր: Այսինքն՝ գիտության մեջ լեզվի գործունեությունը պատահական չէ: Այն իր գործառույթներով ներթափանցում է գիտության մեջ եզրույթների միջոցով, որոնք ապահովում են գիտության և տեխնիկայի, արտադրության ճյուղերի, հասարակական կյանքի բոլոր բնագավառների զարգացումն ու կատարելագործումը և նպաստում հասարակության առաջընթացին: Նոր գաղափարներ արտահայտելու համար ստեղծվում և փոխառվում են նոր բառեր, որոնք սովորաբար կոչվում են եզրույթներ: Ներկայումս գոյություն ունի եզրույթ հասկացության ավելի քան 3000 սահմանում: Սակայն այնուամենայնիվ չկա եզրույթի համընդհանուր սահմանում, քանի որ մի կողմից դեռևս բավարար չափով մշակված չեն եզրույթաբանության տեսական հիմքերը, իսկ մյուս կողմից այն տարատեսակ սահմանումները, որոնք առկա են այժմ գրականության մեջ, ոչ միշտ և ոչ լրիվ չափով են արտացոլում սահմանվող երևույթի էությունը: Եզրույթները լեզվի այն բառերը կամ բառակապակցություններն են, որոնք արտահայտում են գիտական հասկացություններ. դա եզ-



րույթի և բառի հիմնական տարբերակիչ հատկանիշներից մեկն է, այն նաև գուրկ է հուզականությունից, բազմիմաստությունից: Եզրույթաբանությունը հաճախ տարանջատում է եզրույթները սովորական բառերից: Եզրույթի էությունը հասկանալու համար սույն հոդվածում կուսումնասիրենք եզրույթի և բառի համակարգային առանձնահատկությունները:

### ***Եզրույթի և բառի առանձնահատկությունները***

Բառի և եզրույթի փոխազդեցության խնդիրը լուսաբանվել է բազմաթիվ լեզվաբանների աշխատանքներում: Մի շարք լեզվաբաններ, ինչպես օրինակ Դ.Ս. Լոտտեն, Լ.Ա. Կապանաձեն հակադրում են եզրույթը բառին և դիտարկում դրանք որպես հատուկ բառեր, որոնք օժտված են յուրահատուկ իմաստաբանական կամ ձևաբանական հատկանիշներով (Лотте 1961; Капанадзе 1965): Մյուսները, ինչպես օրինակ Գ.Օ. Վինոկուրը, Բ.Ն. Գոլովինը, դիտարկում են եզրույթը որպես հատուկ գործառույթով բառ, ընդ որում ոչ մի սահմանազատում չանցկացնելով եզրույթի և բառի միջև (Винокур 1939; Головин 1977): Բառը լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է, որն ունի ինքնուրույն գործածություն և վերարտադրվում է խոսքի մեջ հաղորդակցական միավորներ կառուցելու համար: Այն ձևաիմաստային միավոր է, որն ունի իր որոշակի ձևը և իմաստները: Բառի ձևի մեջ մտնում են նրա հնչյունակազմը, արտաքին նյութական ձևավորումը, որը բանավոր խոսքում դրսևորվում է հնչյունների միջոցով, իսկ գրավոր խոսքում՝ տառանիշների որոշակի դասավորությամբ (Խաչատրյան 2008): Բառի մասին վերը շարադրվածը թույլ է տալիս ասել, որ բառի ձևը որոշակի է, նրա հնչյունական կազմի յուրաքանչյուր բաղադրիչ իմաստազատիչ դեր ունի և դրանց դասավորության փոփոխությունը կարող է հանգեցնել իմաստափոխության: Պետք է նշել, որ բառերի գերակշռիչ մասն արտահայտում է հասկացություն՝ առարկա, առարկայի հատկանիշ, գործողություն, գործողության հատկանիշ, ինչպես նաև փոխարինում է առարկայի, հատկանիշի և գործողության հատկանիշի անվանը: Դրանք լիիմաստ, կամ նյութական իմաստ և ինքնուրույն գործածություն ունեցող բառերն են, որոնք խոսքի մասերից համընկնում են գոյականին, բային, ածականին, թվականին, մակբային և դերանվանը: Որպես եզրույթներ առավել հաճախ հանդիպում են հասարակ գոյականները, որոնք կորցնելով իրենց ուղիղ իմաստը՝ ձեռք են բերել փոխաբերական իմաստ: Ինչպես օրինակ «bus» գոյականը, որը համագործածական բառապաշարում ունի «ավտոբուս» իմաստը, իսկ որպես եզրույթ՝ այն նշանակում է «կապուղի», «գծուղի»: Նույնը կարելի է ասել «drive» գոյականի մասին: Համագործածական բառապաշարում այն հանդես է գալիս «ուղևորություն», «զբոսանք» իմաստներով, իսկ որպես եզրույթ՝ այն ունի «հիշասարք», «սարքավար» իմաստները: «Header» գոյականը համագործածական բառապաշարում նշանակում է «գլխիվայր ցատկ», իսկ որպես եզրույթ՝ «էջազուլիս»: «Pie» գոյականը համագործածական բառապաշարում հանդես է գալիս «կարկանդակ» իմաստով, իսկ որպես եզրույթ՝ այն նշանակում է «շրջանակաձև գծապատկեր»: Իսկ «bucket» գոյականը համագործածական բառապաշարում ունի «դուլ» իմաստը, բայց որպես եզրույթ՝ «տարողություն», «ծավալ»: Կան բայեր, որոնք նույնպես կորցնելով իրենց ուղիղ իմաստը, փոխաբերաբար հանդես են գա-

լիս որպես եզրույթներ, ինչպես օրինակ՝ *load* բայը: Այն համագործածական բառապաշարում ունի «բարձել» իմաստը, իսկ որպես եզրույթ՝ «ներբեռնել» իմաստը: *Browse* բայը համագործածական բառապաշարում հանդես է գալիս «ուտել», «կրծոտել» իմաստներով, իսկ որպես եզրույթ՝ այն ունի «դիտել», «զննարկել» իմաստները: Նույնը կարելի է ասել *feed* բայի մասին: Համագործածական բառապաշարում այն նշանակում է «կերակրել», «սնել», իսկ որպես եզրույթ՝ «մատակարարել»: *Log* բայը համագործածական բառապաշարում ունի «գերան կտրել» իմաստը, իսկ որպես եզրույթ՝ նշանակում է «գրանցել»: Կան բառեր, որոնք հասկացական, նյութական բովանդակություն կամ իմաստ չունեն, արտահայտում են կապակցական հարաբերություններ, կամ զգացական և կամային վերաբերմունք: Դրանք սպասարկու բառերն են, որոնք զուրկ են նյութական բովանդակությունից և չունեն ինքնուրույն գործածություն: Դրանք են կապերը, շղկկապները, ձայնարկությունները և վերաբերականները: Այսպիսով, կարելի է ասել, որ որպես եզրույթներ հանդես են գալիս միայն լիմաստ խոսքի մասերին պատկանող բառերը, այն է՝ գոյականներ, ածականներ, բայեր, մակբայներ և այլն: Եզրույթները նյութական իմաստ ունեցող այն բառերն են, որոնք հասկացություններ են նշանակում, բայց ամբողջ բառապաշարի առումով միայն գիտական ոլորտի հասկացություններ (Винокур 1939): Քանի որ եզրույթ են համարվում նյութական իմաստ ունեցող բառերը, ուստի շատ անմիջական է եզրույթի և հասկացության կապը: Այդ անմիջականությունը պայմանավորված է նրանով, որ եզրույթը հանդես է գալիս որպես իր իսկ հասկացության նշանակություն: Եզրույթի և հասկացության անմիջական կապը ցայտուն է բնագիտական և տեխնիկական եզրույթաբանության մեջ, որտեղ վերջիններս արտահայտում են առարկայություն կամ ընթացանություն: Այսպիսով, ի տարբերություն սովորական բառի, որի իմաստաբանական հարաբերությունների ծավալն ավելի լայն է, եզրույթի բովանդակությունը հավասարաթեք է իր արտահայտած հասկացությանը, այսինքն՝ եզրույթը համապատասխանում է իր նշանակած հասկացությանը գիտության, արվեստաբանության, տեխնիկայի, արտադրության, հասարակական-քաղաքական որևէ բնագավառում: Հենց սրանով էլ պայմանավորված է այն իրողությունը, որ եզրույթի իմաստը գիտականորեն սահմանելի է: Ցանկացած եզրույթ հասկացությունների տվյալ համակարգում, ի հակադրություն սովորական բառի, պետք է ունենա սահմանափակ, հստակ նշված բովանդակություն՝ անկախ ենթատեքստից, իսկ սովորական բառերը ճշգրտում են իրենց նշանակությունը՝ ձեռք բերելով տարբեր իմաստային երանգներ դարձվածաբանական ենթատեքստում, այլ բառերի հետ կապակցության մեջ: Ավելին, խոսակցական լեզվում հաճախ օգտագործվում են որոշ օժանդակ միջոցներ, ինչպիսին օրինակ հնչերանգն է: Եզրույթի յուրահատկությունը դրա մասնագիտական կիրառությունն է գիտության որոշակի ճյուղում: Պետք է տարբերակել եզրույթը ընդհանուր բառապաշարային ֆոնդի մեջ մտնող բառերից, քանի որ վերջինս առնչվում է համընդհանուր ճանաչում ունեցող օբյեկտի հետ, իսկ եզրույթները՝ յուրահատուկ օբյեկտի հետ, որոնք գոյություն ունեն պարզապես ոչ թե լեզվում, այլ որոշակի եզրույթաբանության կազմում: Եթե համագործածական լեզվում բառը կարող է լինել բազմիմաստ, ապա հանդես գալով եզրույթաբանական որոշակի ենթատեքստում՝ այն ձեռք է բերում մենիմաս-

տություն: Եզրույթները գուրկ են բազմիմաստությունից, արտահայտչականությունից և դրանով իսկ տարանջատվում են սովորական ոչ եզրույթաբանական բառերից, որոնք հենց իրենց առավելությամբ բազմիմաստ են և արտահայտիչ: Լոտտեն նույնպես տեխնիկական եզրույթին է վերագրում այնպիսի յուրահատկություններ, ինչպիսիք են համակարգայնությունը՝ անկախությունը ենթատեքստից, միանշանակությունը, ճշգրտությունը և հակիրճությունը (Lotte 1961): Սակայն բավականին վիճահարույց է եզրույթների միանշանակության հարցը: Չնայած եզրույթին բնորոշ է կապը հստակ սահմանված հասկացության հետ և ձգտումը միանշանակության, ինչի հետևանքով վերջիններս ձեռք են բերում որոշակի անկախություն, դա դեռևս չի նշանակում, որ եզրույթը բոլորովին կախված չէ ենթատեքստից, քանի որ այս պարագայում է բացահայտվում վերջինիս իմաստը (Циткина 1988): Միանշանակությունը կիրառելի է միայն մեկ եզրույթահամակարգի սահմաններում, քանի որ մի շարք ենթալեզուների մակարդակում եզրույթների բազմիմաստությունը բավականին տարածված երևույթ է (Кияк 1989): Սակայն քանի որ եզրույթը արտահայտում է հստակ սահմանված գիտական հասկացություն, ուստի եզրույթների ոլորտում բազմիմաստություն չի կարող գոյություն ունենալ, իսկ մենիմաստությունից եզրույթի շեղման բոլոր դեպքերը բացատրվում են դրա սխալ կիրառմամբ (Авердyx 1986): Չպետք է կարծել, որ եզրույթաբանության և ոչ եզրույթաբանության միջև գոյություն ունի հսկայական անդունդ, այն է՝ եզրույթները բաղկացած են այլ հնչյուններից և չեն ենթարկվում սովյալ լեզվի քերականական օրենքներին: Եթե դա այդպես լիներ, ապա եզրույթաբանությունը չէր պատկանի սովյալ լեզվին և իրենից կներկայացներ այլ լեզու: Իրականում դա այդպես չէ: Որտեղից որ էլ եզրույթները առաջանան և ինչ հնչյունակազմական, բառակազմական ու քերականական առանձնահատկություններով էլ օժտված լինեն, դրանք ներառվում են սովյալ լեզվի բառային կազմում և ենթարկվում այդ լեզվի հնչյունակազմական, բառակազմական և քերականական կառուցվածքին: Եզրույթների և ոչ եզրույթների միջև տեղի է ունենում փոխաբերական անցում. համընդհանուր լեզվի բառերը, կորցնելով իրենց որոշ հատկություններ՝ դառնում են եզրույթներ՝ չդադարելով լինել համընդհանուր լեզվում կիրառվող բառեր: Որպես օրինակ դիտարկենք անգլերեն լեզվում մարմնի մասերից առաջացած տեխնիկական եզրույթները: *Backbone* բառը համագործածական բառապաշարում ունի «որնաշար» իմաստը (the row of a connected bones that go down the middle of your back), սակայն հանդես գալով որպես տեխնիկական եզրույթ՝ այն կորցնում է իր ուղիղ իմաստը և նշանակում «գլխավոր մալուխ» (highspeed, high-capacity connection path that links smaller sub-networks, usually used to connect servers on a network): Նույնը կարելի է ասել «*arm*» բառի մասին: Համագործածական բառապաշարում այն ունի «բազուկ» իմաստը (one of the two long parts of your body between your shoulders and your hands), իսկ որպես տեխնիկական եզրույթ՝ այն ձեռք է բերում «լծակ» իմաստը (it is the long thin part of the machinery that looks and moves like an arm): *Head* բառը համագործածական բառապաշարում նշանակում է «գլուխ» (the top part of your body), սակայն տեխնիկական եզրույթաբանության մեջ այն ստանում է «գլխիկ» իմաստը (the read/write mechanism in a disk or tape drive): Նույն դիտարկումը կարելի է անել *body* բառի վերաբերյալ: Հա-

մագործածական բառապաշարում այն ունի «մարմին» իմաստը (the physical structure of a person), իսկ որպես տեխնիկական եզրույթ՝ հանդես է գալիս «հիմնական մաս» իմաստով (in e-mail and Internet news groups the content of a message): Փոխաբերական անցում է տեղի ունենում նաև կենդանիների անվանումներից առարկաներին: Ինչպես օրինակ *bird* բառը համագործածական բառապաշարում հանդես է գալիս «թռչուն» իմաստով (a creature with wings and feathers that lay eggs and can fly), սակայն տեխնիկական եզրույթաբանության մեջ այն ստանում է «արբանյակ» (a satellite) իմաստը: *Mouse* բառն համագործածական բառապաշարում ունի «մուկ» իմաստը (a small furry animal), իսկ որպես տեխնիկական եզրույթ այն արտահայտում է «համակարգչային մկնիկ» իմաստը (a common pointing device): Նույնը կարող ենք ասել *shell* բառի մասին: Համագործածական բառապաշարում այն նշանակում է «խեցի» (a hard outer part that covers or protects some types of animal), սակայն հանդես գալով որպես տեխնիկական եզրույթ՝ այն ձեռք է բերում «ծրագրային միջավայր», «թաղանթ» (a piece of software, usually a separate program, that provides direct communication between the user and the operating system) իմաստները: Եզրույթների մեջ կան նաև բառեր, որոնք գոյություն ունեն միայն որպես եզրույթներ՝ այն էլ մեկ եզրույթաբանության սահմաններում, ինչպիսիք են օրինակ հաշվողական տեխնիկայի բնագավառում կիրառվող մի քանի եզրույթներ

*cache* (*հիշապահեստ*) - a section of memory used to store a temporary copy of selected data for faster access

*cyberspace* (*կիբեռ տարածք*) - the world in which computers and people interact, normally via the Internet

*software* (*ծրագրային սպահովում*) - any program or group of programs which instructs the hardware on how it should perform, including operating systems, word processors and application programs

*hardware* (*սարքային սպահովում*) - the physical units, components, integrated circuits, disks and mechanisms that make up a computer or its peripherals

Լեզվի բառապաշարի սովորական բառերը կապված են բազմաթիվ հատկություններով: Դրանք ունեն եղանակավորման, արտահայտչականության և գեղագիտական հատկանիշներ: Այլ է եզրույթը: Այն սկզբունքորեն զուրկ է հուզարտահայտչականությունից և եղանակավորությունից, վերջինս ավելի շատ վերացական է, քան արտահայտչականությունը: Եզրույթաբանության ոլորտում այդ ամենը կիրառելի չէ: Եզրույթների հարաբերությունները, որոնք ունեն իրենց տրամաբանական և առարկայական ուղղվածությունը, օբյեկտիվ են, ծագում և զարգանում են ընդհանուր գրական լեզվի նյութական ու բառակազմական օրինաչափությունների հիման վրա՝ երևույթները գիտականորեն սահմանելու, համակարգելու, ներկայացնելու համար: Եզրույթը իր մեջ պարունակում է ճշգրտություն և հստակություն: Սա նշանակում է, որ հասկացության բովանդակության արտացոլման գործառույթի տեսանկյունից վերջինս արտահայտում է իր կողմից նշվող հասկացության էական տարբերակիչ հատկանիշները: Ըստ ճշգրտության աստիճանի եզրույթները նման չեն: Կախված այն բանից, թե որքանով է վերջինիս

տառացի նշանակությունը համապատասխանում իր իրական նշանակությանը, այսինքն՝ հասկացության բովանդակությանը, եզրույթները լինում են ճշգրիտ, չեզոք և ոչ ճշգրիտ (Lotte 1979): Ճշգրիտ եզրույթներ ասելով հասկանում ենք նրանք, որոնց տառացի նշանակությունը ստեղծում է հասկացության մասին ճիշտ պատկերացում: Դրանց թվին են դասվում օրինակ *byte, software, hardware, antenna* եզրույթները: Ճշգրիտ եզրույթները կարող են հիմնվել ոչ միայն ուղղակի, այլ նաև անուղղակի հատկանիշների անմիջական բովանդակության վրա, այսինքն՝ հարել հասկացության բովանդակությանը, դրա հետ որոշակիորեն կապակցված հատկանիշներին, ինչպես օրինակ՝ *command language, computer science, computer revolution* և այլն: Ճշգրիտ եզրույթները հետագայում կարող են կորցնել այդ որակը, երբ գործնականում առկա է այս կամ այն հատկանիշի նշանակությունը, կամ հասկացության բովանդակության հետ հատկանիշի կապը: Հաճախ դա պատահում է անուղղակի հատկանիշների հետ, որոնք կամ դառնում են չեզոք, կամ հակասության մեջ են մտնում հասկացության իրական բովանդակության հետ: Եզրույթների կազմի մեջ երբեմն մտնում են հատկանիշներ, որոնք չեն բացահայտում հասկացության բովանդակությունը: Նման հատկանիշները սովորաբար կապված են ոչ թե հենց հասկացության հետ, այլ դրա ստեղծման պայմանների և հանգամանքների հետ, իսկ երբեմն էլ՝ պատահական են, ինչպես օրինակ՝ *Appletalk, Manchestercode, Markovchain, Karanaghmap* և այլն: Չեզոք կարելի է համարել այն բոլոր եզրույթները, որոնք չունեն տառացի նշանակություն: Դրանք կարող են լինել ինչպես մայրենի լեզվի, այնպես էլ օտարալեզու բառերը: Իսկ ոչ ճշգրիտ եզրույթներին են պատկանում նրանք, որոնցում եզրույթատարբերը հակասում են եզրույթ իրական նշանակությանը և պատկերացում չեն տալիս հասկացության մասին:

Խոսելով եզրույթների հոմանիշության մասին՝ կարող ենք ասել, որ խոսքը գնում է ոչ թե նշանակությունների նմանության մասին, այլ դրանց լրիվ նույնական լինելու մասին: Դ. Ս. Լոտտեն նշում է, որ եզրույթները չպետք է ունենան հոմանիշներ (Lotte 1979): Սակայն պետք է նշել այն իրողությունը, որ կան եզրույթներ, որոնք արտաքինապես, կարծես թե, հոմանիշներ են, բայց իրականում ունեն տարբեր նշանակություններ: Այսպես օրինակ՝ *cable li wire* եզրույթները արտաքինապես նման են, բայց ունեն տարբեր նշանակություններ: Եզրույթներին հատուկ է նաև տարբերակայնությունը, իսկ հոմանիշությունը տարբերակայնության դրսևորման մասնավոր դեպք է և չի կարող անտեսվել, քանի որ գոյություն ունի եզրույթի լեզվական հիմք, և եզրույթով նշված հասկացության մեջ կարող են բացահայտվել տարբեր հատկանիշներ, որոնցով այն կարող է կոչվել (Лейчик 2000): Քանի որ եզրույթները ամբողջանում են եզրույթահամակարգերում, ուստի դրանց բնորոշ են որոշակի համակարգային հատկանիշներ: Իսկ եթե եզրույթը համապատասխանում է հասկացությանը, ուրեմն պետք է նաև համապատասխանի հասկացության բովանդակության հատկանիշներին, որոնք համարվում են նրա կառուցվածքի հիմքը: Ուստի ավելի համակարգված կլինեն այն եզրույթները, որոնք ունեն համասեռ հատկանիշներ, ինչպես օրինակ անգլերեն լեզվում *computer, notebook* և *laptop, radio li wireless* եզրույթները, որոնք անվանում են նույն համակարգի գործիքակազմը և ունեն համասեռ հատկանիշներ: Համակար-

գայնությունը կարող է խախտվել այն դեպքում, երբ սահմանվող հասկացությունների հիմքում կան իմաստային կամ կիրառական գանազանություններ: Վերը նշվածից հետևում է, որ եզրույթների հանդեպ ընդհանուր պահանջներ գոյություն չունեն: Դրա համար կան մի շարք պատճառներ: Հիմնական պատճառը օբյեկտի բարդությունն ու անվանական գործառույթ կատարելու լեզվական հնարավորություններն են: Հատուկ գործառույթը, որտեղ բառը հանդես է գալիս որպես եզրույթ, անվանական գործառույթն է (Винокур 1939): Այստեղ վերջինս ծառայում է որպես հասկացության անվանում: Սակայն անվանողականությունը չի կարող համարվել եզրույթը այլ բառերից բաժանող կարևոր հատկանիշ, քանի որ անվանական գործառույթը հատկանշական է ոչ միայն եզրույթներին, այլ նաև մասնավորապես բոլոր գոյական անուններին ու գոյական բառակապակցություններին: Չպետք է շփոթել եզրույթը՝ որպես առարկայի անվանում, ո՛չ հատուկ անվան, ո՛չ էլ բառային նշանի հետ: Պետք է տարբերել եզրույթներն ու բառային նշանները և այն, որ հատուկ անունները չեն կարող լինել եզրույթներ: Սակայն հենց հատուկ անունները կարող են լինել բառային նշաններ և այն, ինչ թաքնված է բառային նշանների ու անգամ հատուկ անունների հետևում նույնպես առարկաների անվանումներ են, որոնք այլ որակ ունեն: Անվանողականությունը եզրույթի միակ գործառույթը չէ: Դրա ոչ պակաս կարևոր գործառույթներից է հասկացության բովանդակության արտացոլումը: Հասկացության բովանդակության արտացոլման տրամաբանական կարգի համաձայն տարբերակվում են առարկաների, գործընթացների հատկանիշների հատկությունների, մեծությունների և դրանց միավորների եզրույթներ (Lotte 1979): Առարկաների կարգին են պատկանում մեքենաների, սարքերի, մասերի, նյութերի հետ կապված հասկացությունները, ինչպես օրինակ *computer, antenna, dish, earphones, mike, monitor, prompter* եզրույթները: Գործընթացների կարգը կազմում են գործողությունների, տեղաշարժերի, այսինքն՝ որակական և քանակական փոփոխությունների հետ կապված հասկացությունները: Գործընթացները ժամանակակից տեխնիկայի կարևորագույն կարգ են համարվում: Գործընթացների տեխնիկական եզրույթներն առաջինն ուսումնասիրող լեզվաբան Գ.Վինոկուրը դրանք անվանել է աշխատանքի և տեխնիկայի հիմնական տրամաբանական կարգ (Винокур 1939): Գիտության և տեխնիկայի այդ կարգի եզրույթների գործառույթյան մեջ հանդես են գալիս գործողության անուններ, ինչպես օրինակ *programming, processing, arcing, blanking, captioning, miking, morphing* եզրույթները: Հատկությունների կարգին է վերաբերվում առարկաների որակական կողմը, ինչպես օրինակ *flexible, hard, airable, digital* եզրույթները: Հատկությունների կարգին վերաբերող հասկացությունները, կախված գիտելիքի այս կամ այն ոլորտում ձևավորված եզրույթաբանական գործընթացից, կարող են սահմանվել նաև որպես ունակություն: Մեծության կարգին են վերագրվում երևույթները քանակական կողմից գնահատող հասկացությունները: Դրանք հաշվարկային հասկացություններն են, պարամետրերը, գործակիցները, ինչպես օրինակ *byte, bit* եզրույթները: Քանի որ քանակապես գնահատվում են և՛ առարկաները, և՛ գործընթացները, և՛ հատկությունները, ապա մեծությունների կարգի հասկացությունների տեսակները շատ բազմազան են:

## Եզրակացություն

Ուսունասիրության նյութը թույլ է տալիս զուգադրել «բառը» և «եզրույթը» և վերլուծել նրանց բնորոշ լեզվաբանական առանձնահատկությունները: Այսպիսով կարող ենք փաստել, որ եզրույթը բառ է կամ բառակապակցություն, որն արտահայտում է գիտական հասկացություն, և որի իմաստը ոչ միայն գիտականորեն, այլև ճշգրտորեն սահմանելի է: Քանի որ եզրույթը արտահայտում է գիտական հասկացություն, ուստի այն զուրկ է հուզական և արտահայտչական երանգից: Վերջինիս բնորոշ է նաև համակարգայնությունը, միանշանակությունը, ճշգրտությունը և հակիրճությունը: Ի վերջո եզրույթներն արտացոլում են օբյեկտիվ աշխարհի հասկացություններ՝ առարկայության, ընթացայության, առարկայի և նրա հատկանիշի իմաստով, ուստի տարբերակում են առարկաները, գործընթացների հատկանիշները, հատկությունները, մեծությունները և դրանց միավորները բնորոշող եզրույթներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Է.Բ. (1987) *Լեզվաբանության հիմունքներ*. Երևան: ԵՊՀ հրատ.
2. Խաչատրյան, Լ.Մ. (2008) *Լեզվաբանության ներածություն*. Երևան: Չանգակ 97:
3. Գրիգորյան, Վ.; Կարապետյան, Կ (2005) *Անգլերեն-հայերեն համակարգչային և մաթեմատիկական եզրերի բառարան*. Երևան: «Նորք գրատուն»:
4. Авербух, К.Я. (1986) *Терминологическая вариантность; теоретические и прикладные аспекты*. // Вопросы языкознания, N 6. М.: Наука.
5. Винокур, Г.О. (1939) *О некоторых явлениях словообразования в русской технической терминологии*. // Труды МИИФЛИ, Т.5. Москва.
6. Головин, Б.Н.; Кобрин, Р.Ю (1987) *Лингвистические основы учения о терминах*. М.: Высшая школа.
7. Иллингвурта, В.; Глейзера, Э.Л.; Пайла, И.К. (1989) *Толковый словарь по вычислительным системам*. М.: «Машиностроение».
8. Капанадзе, Л.А. (1965) *О понятиях «термин» и «терминология»*. // Развитие лексики современного русского языка. М.: Наука.
9. Кияк, Т.Р. (1989) *Лингвистические аспекты терминоведения*. Киев: УМК ВШ.
10. Лейчик, В.М. (2000) *Проблемы отечественного терминоведения в конце XX века*. // Вопросы филологии, N 2. Москва.
11. Лотте, Д.С. (1979) *Краткое методическое пособие по разработке и упорядочению научно-технической терминологии*. М.: Наука.
12. Лотте, Д.С. (1961) *Основы построения научно-технической терминологии: Вопросы теории и методики*. М.: Изд-во АН СССР.
13. Никитина, С.Е. (1987) *Семантический анализ языка науки (на материале лингвистики)*. М.: Наука.
14. Реформатский, А.А. (1968) *Термин как член лексической системы*. // Проблемы структурной лингвистики. М.: Наука.
15. Циткина, Ф.А. (1988) *Терминология и перевод*. Львов: Высшая школа.

16. Collin, S.M.H. (2004) *Dictionary of Computing*, 5<sup>th</sup> edition, London: Bloomsbury Publishing Plc.
17. *Microsoft Computer Dictionary* (2002), 1<sup>st</sup> ed.. Microsoft Corporation, Microsoft Press.

### **The Scientific Definition of *term* and *word* and Their Peculiarities**

The following article analyzes the *term* and *word* and their characteristic peculiarities. It must be noted that the word is a complete meaningful element of language. All terms are words but not all words are terms. A term is a word, or a word combination which has a specific meaning and is applicable to a special situation.

### **Научное определение понятий *термин* и *слово* и их особенности**

В данной статье анализируются понятия *термин* и *слово* и их характерные черты. Нужно отметить, что *слово* является одной из основных единиц языка, которая служит для именованя/называня предметов или понятий. А *термином* является слово или словосочетание, которое обозначает предмет или понятие из какой-нибудь области науки, техники и искусства. Для расшифровки слова часто требуется контекст. Для понимания термина контекст не нужен, так как термин оперирует в рамках специализированной области и однозначен.



## Մեր հեղինակները

**Ալինա Պետրոսյան** – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, ք.գ.թ.  
Էլ. հասցե՝ [alina.petrosyan@yahoo.com](mailto:alina.petrosyan@yahoo.com)

**Անահիտ Հակոբյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝  
[anahit.hakobyan1988@yandex.ru](mailto:anahit.hakobyan1988@yandex.ru)

**Անի Տեր-Պետրոսյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [aniterpetrosyan@ysu.am](mailto:aniterpetrosyan@ysu.am)

**Աննա Կնյազյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.  
Էլ. հասցե՝ [annaknyazyan@ysu.am](mailto:annaknyazyan@ysu.am)

**Աստղիկ Մխիթարյան** – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի  
Էլ. հասցե՝ [asto7@rambler.ru](mailto:asto7@rambler.ru)

**Արեգա Համբարձումյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [orbisenglish@gmail.com](mailto:orbisenglish@gmail.com)

**Արմենուհի Մարտիրոսյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ  
Էլ. հասցե՝ [arm.martirosyan@ysu.am](mailto:arm.martirosyan@ysu.am)

**Գայանե Մուրադյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.  
Էլ. հասցե՝ [g.murad@ysu.am](mailto:g.murad@ysu.am)

**Գոհար Հարությունյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.  
Էլ. հասցե՝ [goharharutyunyan@ysu.am](mailto:goharharutyunyan@ysu.am)

**Համլետ Առաքելյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [hamlet.araqelyan@gmail.com](mailto:hamlet.araqelyan@gmail.com)

**Հասմիկ Ղաջոյան** – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [hasmikghajoyan@mail.ru](mailto:hasmikghajoyan@mail.ru)

**Հասմիկ Մկրտչյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [hasmikmkrтчyan@ysu.am](mailto:hasmikmkrтчyan@ysu.am)

**Մարիամ Առաքելյան** – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ  
Էլ. հասցե՝ [mariamarakelyan89@mail.ru](mailto:mariamarakelyan89@mail.ru)

**Մարիամ Գևորգյան** – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ [miriamgevorgian@gmail.com](mailto:miriamgevorgian@gmail.com)

**Մարիանա Սարգսյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.  
Էլ. հասցե՝ [marianasargsyan@ysu.am](mailto:marianasargsyan@ysu.am)

**Մարիկա Տոնյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.  
Էլ. հասցե՝ [marikatonyan@ysu.am](mailto:marikatonyan@ysu.am)

**Մարինե Մկրտչյան** – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ [m.mkrтчyan@ysu.am](mailto:m.mkrтчyan@ysu.am)

**Նաիրա Մկրտչյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.  
Էլ. հասցե՝ [nairamkryan@ysu.am](mailto:nairamkryan@ysu.am)

**Նատալյա Գոնչար-Խանջյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.  
Էլ. հասցե՝ [natalie.goncharkhanjyan@ysu.am](mailto:natalie.goncharkhanjyan@ysu.am)

**Նարե Հակոբյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

**Նարե Մկրտչյան** – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

**Նարե Չոբանյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ  
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

**Նարե Ջաբաղյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

**Ջեմմա Միլիտոնյան** – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս  
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

**Ռուզաննա Առաքելյան** – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

**Միրարփի Կարապետյան** – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.  
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝  
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել [afajournal@ysu.am](mailto:afajournal@ysu.am) էլ. հասցեին:



Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,  
Երևանի պետական համալսարան  
Հեռախոս՝ (+374 60) 710 546  
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

**«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ**



**Հրատարակչություն**  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)